# Terms of Reference (ToR) for Mentorship Support for CSOs on

# LOT2: Vocational Education and Economic Resilience Interventions

| **Position information** | |
|---|---|
| Position title | Mentor for Civil Society Organizations (CSOs) in Vocational Education and Economic Resilience Interventions |
| Project title | Reinforcement of the Migration Management System in the Republic of Armenia (MPF) |
| Organisation | People in Need, Representative Office in Armenia |
| Appointment type | Service Contract |
| Estimated duration | 4 months (15 October 2024 – 15 February 2025) |
| Location | Ararat, Armavir, Kotayk, Tavush, Shirak, Vayots Dzor |

## I. Background

"Reinforcement of the Migration Management System in the Republic of Armenia" project aims to counter irregular migration to EU member states by ensuring successful integration of returnees and foreign nationals in the Republic of Armenia. This overall objective will be achieved through two specific objectives, namely: (SO1): To improve the capacity of the Government of the Republic of Armenia (GOAM) to manage inward migration to Armenia, and (SO2): To strengthen the capacities of local CSOs providing services to different migrant group.

Within the project a call for subgrants was announced for Armenia's civil society organizations (CSOs) for provision of social services to various migrant and refugee groups. The call constituted of two schemes – LOT1 for the projects implemented by CSOs and LOT2 for the projects implemented by CSOs in close cooperation with state institutions. As a result, 19 projects were selected (11 under the LOT1 and 8 under the LOT2), that will be implemented during August 2024 - February 2025. The majority of the selected projects aim at working with the forcibly displaced people from Nagorno-Karabakh as a target group. Several selected CSOs also aim at working with (returning) labor migrants and their families. The projects cover wide geography throughout all regions of Armenia. The thematic fields of the projects range from social care for vulnerable groups (children, elderly, people with special needs), employment support and vocational training, to psychosocial support and community integration.

Under this ToR, Mentorship Support will be provided only to the selected CSOs that provide employment support, vocational training or similar intervention.

**II. Objective**

In line with our commitment to enhance the capacity of CSOs while implementing their projects and providing employment and economic resilience interventions for their beneficiaries (various groups of migrants, refugees, displaced people), we are seeking to engage a mentor.

The mentor will work collaboratively with 8 subgrantee CSOs across various regions of Armenia, guiding and training them in the implementation of their respective projects and ensuring improved and effective economic and employment interventions for beneficiaries, specifically for forcibly displaced youth and adults, returning migrants and seasonal/labor migrants who have decided to halt emigration and stay in their origin communities.

The mentor's work will encompass the following areas:

- Capacity Building: Strengthen the capabilities of CSOs in designing and implementing effective vocational education and economic resilience programs for their beneficiaries.
- Technical Assistance: Providing guidance on the implementation of the economic empowerment, employment support and/or vocational training components of the projects.
- Networking: Facilitating connections between CSOs and other state/nonstate actors and other key stakeholders to promote best practices and shared learning.

**III. Scope of Work**

The mentor is expected to work directly with each CSO (8 in number), dedicating time to coaching and training staff members.

The Mentor will perform the following tasks:

1. ***Initial Assessment and Tailored Action Plans (weeks 1-3)***

- Conduct an initial assessment of each CSO to identify their current capacity, specific needs and areas for improvement when delivering economic empowerment, vocational training or employment support activities.
- Collaborate with each CSO and the PIN Project team to develop a tailored action plan addressing identified needs, including specific timelines for improvement.

2. ***Mentorship Sessions (weeks 4-16)***

- Deliver focused mentorship sessions through in-person meetings, online/phone consultations, and workshops as necessary, with a minimum of 6 meetings per CSO.
- Offer ongoing support and feedback as CSOs implement their projects.

- Provide minimum 12 days of mentorship per month for the duration of the contract, totaling 50 days over the contract period.
- Upon necessity, organize one networking event (online or in-person) to bring together the CSOs implementing economic/employment interventions and relevant stakeholders.

***3. Resource Development (throughout duration)***

- Develop tailored resources (guidelines, toolkits, templates) to support the CSOs their activities of employment support, economic empowerment and vocational training.

***4. Periodic Reporting***

- Provide and submit monthly written reports summarizing activities conducted, challenges faced, and recommendations for each CSO.

## IV. Deliverables

1. Initial Assessment Report for each CSO
2. Tailored Action Plans for each CSO
3. Mentorship Hours Log (a documented log of hours spent with each CSO to be maintained throughout the contract duration)
4. Monthly Progress Reports (including the provided tools)
5. Final Report (a comprehensive report outlining the overall impact, key achievements, and recommendations for future engagement -due at the end of the contract)

## V. Qualifications

The ideal candidate should possess:

- A proven track record of mentorship or training in economic resilience, employment support and vocational training interventions.
- Strong understanding of Armenia’s economic context and related employment/ self-employment sector, skills retention and vocational training, especially for the forcibly displaced people and migrants (seasonal labor migrants, returning migrants).
- Excellent facilitation and communication skills.
- Familiarity with migration, refugee and displacement context in Armenia will be an asset.

## VI. Selection Criteria

The mentor will be selected based on:

- Relevant experience and qualifications.
- Proposed methodology for mentoring.

- References for similar services will be an asset.

**VII. Payment and Contract Duration**

The payments will be done on a monthly basis, upon receipt of the progress reports.

Separate transportation, accommodation and per-diem fees will not be provided, although PIN's transportation will be used occasionally, upon agreement with the project team.

**VIII. Application Process**

Interested candidates should submit their application to procurement.armenia@peopleinneed.net, including their CV outlining experience in the respective field, a detailed outline of proposed methodology and estimated budget for the service, including daily rate in AMD.

Applications must be submitted by **13 September 2024, 18:00**. Late submissions will not be considered.

***

*The "Reinforcement of the Migration Management System in the Republic of Armenia" project is implemented by People in Need. The project is cofunded by the European Union through the Migration Partnership Facility implemented by ICMPD.*

**Տեխնիկական բնութագիր**

**Քաղաքացիական հասարակության կազմակերպություններին (ՔՀԿ) մենթորային աջակցություն**

**ԼՈՏ 2: Մասնագիտական վերապատրաստում եւ տնտեսական դիմակայունություն**

| **Տեղեկատվություն աշխատանքի մասին** | |
|---|---|
| Անվանումը | Մենթորություն՝ մասնագիտական վերապատրաստման և տնտեսական դիմակայունության գործողություններ իրականացնող ՔՀԿ-ների համար |
| Ծրագրի անվանումը | Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում |
| Կազմակերպություն | «Մարդը կարիքի մեջ» ՀԿ |
| Պայմանագրի տեսակը | Ծառայության պայմանագիր |
| Տևողությունը | 4 ամիս (հոկտեմբերի 15, 2024թ. – փետրվարի 15, 2025թ.) |
| Վայրը | Արարատ, Արմավիր, Կոտայք, Տավուշ, Շիրակ, Վայոց Ձոր |

**I. Ծրագրի նկարագիր**

«Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի նպատակն է հակազդել դեպի ԵՄ անդամ պետություններ անօրինական միգրացիային՝ ապահովելով վերադարձողների ու օտարերկրյա քաղաքացիների հաջող ինտեգրումը ՀՀ-ում: Ծրագիրն ունի երկու ընդհանուր թիրախային ուղղություն. (1) Բարելավել Հայաստանի Հանրապետության կառավարության կարողությունները՝ կառավարելու դեպի Հայաստան միգրացիայի հոսքերը; և (2) Զարգացնել միգրանտների տարբեր խմբերին ծառայություններ մատուցող տեղական քաղհասարակության կազմակերպությունների կարողությունները:

Ծրագրի շրջանակում հայտարարվել է Հայաստանում միգրանտների և փախստականների տարբեր խմբերի սոցիալական ծառայությունների տրամադրման ենթադրամաշնորհային հրավեր, որն ունեցել է երկու ուղղություն: Առաջինը նախատեսված էր ՔՀԿ-ների կողմից իրականացվող ծրագրերի համար (ԼՈՏ1 / փոքր դրամաշնորհներ), իսկ երկրորդը նախատեսված էր ՔՀԿ-պետական կառույց համագործակցությամբ իրականացվող ծրագրերի համար (ԼՈՏ2 / մեծ դրամաշնորհներ): Արդյունքում ընտրվել են 19 ծրագրեր (11-ը՝ ԼՈՏ1-ով և 8-ը՝ ԼՈՏ2-ով), որոնք

կիրականացվեն 2024թ. օգոստոսից 2025թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում: Ընտրված ենթադրամաշնորհային ծրագրերի ճնշող մեծամասնությունը, որպես թիրախ խումբ, նախատեսում է աշխատել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց հետ: Որոշ ՔՀԿ-ներ նաև նախատեսում են աշխատել (վերադարձող) աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքիների հետ: Ծրագրերն ընդգրկում են Հայաստանի բոլոր մարզերը: Ծրագրերի թեմատիկ ոլորտները բազմազան են՝ խոցելի խմբերի (երեխաներ, տարեցներ, հատուկ ֆիզիկական կարիքներով մարդիկ) սոցիալական խնամքից, զբաղվածության աջակցությունից և մասնագիտական ուսուցումից, մինչև հոգեսոցիալական աջակցություն և համայնքային ներգրավում:

Սույն աշխատանքի նկարագրով նախատեսվում է մենթորային աջակցություն տրամադրել միայն այն ընտրված ենթադրամաշնորհառու ՔՀԿ-ներին, որոնց ծրագրերը ներառում են մասնագիտական վերապատրաստում, զբաղվածության կամ տնտեսական աջակցություն կամ նմանատիպ միջամտություն շահառուների համար:

**II. Նպատակը**

ՔՀԿ-ների կարողությունները զարգացնելու իր հանձնառությանը համահունչ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ-ն փնտրում է մենթորի ծառայություններ՝ նպաստելու ՔՀԿ-ներին հաջողությամբ իրականացնելու զբաղվածության և տնտեսական դիմակայունության միջամտություններ իրենց շահառուների համար (միգրանտներ, փախստականներ, տեղահանված անձինք և այլն):

Մենթորն աշխատելու է Հայաստանի տարբեր մարզերում գտնվող 8 ենթադրամաշնորհառու ՔՀԿ-ների հետ՝ ուղղորդում և ուսուցում տրամադրելով նրանց ծրագրերի իրականացման ընթացքում և նպաստելով ՔՀԿ-ների կողմից շահառուներին (տեղահանված անձինք, վերադարձող և աշխատանքային միգրանտներ) տրամադրվող տնտեսական և զբաղվածության բնույթի աջակցության որակի բարելավմանը:

Մենթորի աշխատանքն ընդգրկում է հետևյալը.

- *Կարողությունների զարգացում.* գործնականում ՔՀԿ-ների կարողությունների ամրապնդում՝ մասնագիտական վերապատրաստման և տնտեսական կայունացման ծրագրերի մշակման և իրականացման ոլորտում:
- *Տեխնիկական աջակցություն.* ուղղորդում ծրագրերի տնտեսական կայունացման, զբաղվածության և մասնագիտական վերապատրաստումների բաղադրիչների վերաբերյալ:
- *Կապերի ստեղծում.* ՔՀԿ-ների, պետական, ոչ-պետական կառույցների և այլ շահագրգիռ կողմերի միջև կապերի խթանում՝ լավագույն փորձը կիսելու և միասնաբար սովորելու նպատակով:

**III. Աշխատանքի շրջանակը**

Մենթորն անմիջականորեն աշխատելու է 8 ՔՀԿ-ների հետ՝ յուրաքանչյուրին ժամանակ հատկացնելով նրանց աշխատակիցների քոուչինգի և ուսուցման համար:

Մենթորն իրականացնելու է հետևյալ առաջադրանքները:

1. ***Նախնական գնահատում և դրանից բխող գործողությունների պլանի մշակում (1-3 շաբաթներ)***
- Անցկացնել ՔՀԿ-ների նախնական գնահատում՝ բացահայտելու նրանց ներկայիս կարողությունները և հատուկ կարիքները տնտեսական կայունացման, մասնագիտական վերապատրաստման և զբաղվածության խթանման միջամտություններ իրականացնելիս:
- Համագործակցելով յուրաքանչյուր ՔՀԿ-ի և ՄԿՄ-ի ծրագրային թիմի հետ՝ մշակել հատուկ գործողությունների պլան (ժամանակացույցով), որը կարձագանքի բացահայտված կարիքներին:

2. ***Մենթորություն (4-16 շաբաթներ)***
- Թիրախային մենթորություն տրամադրել դեմ-առ-դեմ հանդիպումների, օնլայն/հեռախոսային խորհրդակցությունների և աշխատաժողովների միջոցով (ըստ ֆորմատի անհրաժեշտության)՝ կատարելով նվազագույնը 6 հանդիպում յուրաքանչյուր ՔՀԿ-ի հետ:
- Շարունակական աջակցություն/ մենթորություն տրամադրել ՔՀԿ-ներին իրենց ծրագրերի իրականացման ընթացքում:
- Ամսեկան նվազագույնը 12 օր հատկացնել մենթորությանը, ընդհանուր առմամբ՝ 50 օր պայմանագրի վավերության ընթացքում:
- Ըստ անհրաժեշտության կազմակերպել կապերի զարգացման/ համագործակցության միջոցառում (առցանց կամ անցանց)՝ մեկտեղելու տնտեսական/զբաղվածության միջամտություններ անող ՔՀԿ-ներին և շահագրգիռ կողմերին:

3. ***Ռեսուրսների տրամադրում (ընթացիկ)***
- Մշակել ռեսուրսներ և նյութեր (ուղեցույցներ, գործիքներ, նմուշներ), որոնք ՔՀԿ-ներին օգտակար կլինեն տնտեսական կայունացման, զբաղվածության խթանման և մասնագիտական վերապատրաստման գործողություններ իրականացնելիս:

4. ***Պարբերական հաշվետվություններ***
- Ամսեկան գրավոր զեկույց ներկայացնել՝ ներառյալ իրականացրած գործողությունները, առաջացած խնդիրները և յուրաքանչյուր ՔՀԿ-ի մասով առաջարկությունները:

**IV. Արդյունքներ**

1. Նախնական գնահատում յուրաքանչյուր ՔՀԿ-ի համար:
2. Գործողությունների պլան յուրաքանչյուր ՔՀԿ-ի համար:

3. Մենթորության ժամերի գրանցամատյան (յուրաքանչյուր ՔՅԿ-ի հետ աշխատած ժամերի մատյան, որը պետք է վարվի պայմանագրի ողջ ընթացքում):
4. Ամսեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն (ներառյալ տրամադրված նյութերը):
5. Ավարտական զեկույց (համապարփակ զեկույց մենթորության ընդհանուր ազդեցության վերաբերյալ գնահատականով, հիմնական ձեռքբերումների նկարագրությամբ, հետագայի համար առաջարկություններով):

**V. Անհրաժեշտ որակները**

Թեկնածուն պետք է ունենա.

- Տնտեսական կայունացման, զբաղվածության խթանման և մասնագիտական վերապատրաստման ոլորտներում մենթորության կամ դասավանդման հիմնավոր փորձ:
- Հայաստանում տնտեսական համատեքստի, զբաղվածության/ ինքնազբաղվածության, հմտությունների վերաձևակերպման և մասնագիտական վերապատրաստման ոլորտների վերաբերյալ լավ իրազեկվածություն, մասնավորապես՝ բռնի տեղահանված անձանց, և միգրանտների (սեզոնային, աշխատանքային, վերադարձող) համատեքստում:
- Ֆասիլիտացիայի և հաղորդակցման հմտություններ:
- Հայաստանում միգրացիայի, փախստականության և տեղահանության համատեքստին ծանոթ լինելը առավելություն կդիտվի:

**VI. Ընտրության չափանիշներ**

Մենթորի ընտրությունը կկատարվի հետևյալ չափանիշներից ելնելով.

- Համապատասխան փորձն ու որակավորումը;
- Մենթորությունն իրականացնելու համար առաջարկվող մեթոդաբանությունը;
- Կատարված նմանատիպ աշխատանքների վերաբերյալ տեղեկանքները/հղումները առավելություն կդիտվեն:

**VII. Վճարումն ու պայմանագրի տևողությունը**

Վճարումը կկատարվի յուրաքանչյուր ամիս՝ ամսեկան առաջընթացի վերաբերյալ հաշվետվության հիման վրա:

Մենթորին առանձին տրանսպորտ, կացարան և օրապահիկ չի հատկացվի: Որոշ պարագաներում ՄԿՄ-ի փոխադրամիջոցը կարող է օգտագործվել մենթորի այցերի համար՝ ծրագրի թիմի հետ նախապես համաձայնությամբ:

**VIII. Դիմելու կարգը**

Հետաքրքրվողները կարող են ուղարկել իրենց դիմումները procurement.armenia@peopleinneed.net հասցեին՝ կցելով ինքնակենսագրական (CV), առաջարկվող մեթոդաբանությունը, որը ներառում է նաև ծառայության համար ակնկալվող գումարը (օրավարձը՝ նշված ՀՀ դրամով):

Դիմումները պետք է ուղարկվեն մինչև **2024թ. սեպտեմբերի 13-ը, ժամը 18:00-ը:** Ուշ ներկայացված դիմումները չեն դիտարկվի:

***

*«Միգրացիայի կառավարման համակարգի ամրապնդումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագիրն իրականացվում է «Մարդը կարիքի մեջ» կազմակերպության կողմից: Այն համաֆինանսավորում է Եվրոպական միության Միգրացիոն գործընկերության գործիքի (MPF) շրջանակում՝ Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի (ICMPD) միջոցով:*